ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռումինիայի կառավարության միջև առևտրատնտեսական կապերի և գիտատեխնիկական համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռումինիայի կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

գիտակցելով ավանդական առևտրատնտեսական կապերի հատուկ նշանակությունը,

ձգտելով խորացնել հարաբերությունները Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի միջև,

ինչպես նաև ղեկավարվելով առևտրատնտեսական հարաբերություններում իրավահավասարության, փոխշահավետության սկզբունքներով և միջազգային իրավունքի այլ սկզբունքներով,

որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը և պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը կաջակցեն փոխշահավետ տնտեսական և առևտրական հարաբերությունների զարգացմանը Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի միջև՝ համաձայն երկրներից յուրաքանչյուրի օրենսդրության:

Հոդված 2

Առևտրատնտեսական համագործակցության զարգացման համար փոխշահավետ պայմանների ապահովման նպատակով Պայմանավորվող կողմերը տրամադրում են միմյանց առավել բարենպաստ պայմանակարգ:

Սույն հոդվածի վերոհիշյալ դրույթը չի տարածվում այն առավելությունների վրա, որոնք.

ա) Պայմանավորվող կողմերից մեկը տրամադրել է կամ ապագայում կարող է տրամադրել այլ երկրներին սահմանամերձ և մերձափնյա առևտրի հեշտացման նպատակով,

բ) բխում են, ներկայումս կամ ապագայում, Պայմանավորվող կողմերից որևէ մեկի՝ մաքսային միություններում և ազատ առևտրի գոտիներում մասնակցությունից:

Հոդված 3

Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի արտաքին տնտեսական կապերի մասնակիցները, այսուհետ՝ Սուբյեկտներ, փոխադարձ համագործակցության մեջ ղեկավարվելու են միջազգային առևտրում և ֆինանսական պրակտիկայում ընդունված սկզբունքներով՝ կիրառելով ընթացիկ համաշխարհային գները:

Մատակարարվող ապրանքների և մատուցվող ծառայությունների գները, ինչպես նաև հաշվարկների և մատակարարման պայմանները կսահմանվեն պայմանագրերում:

Հոդված 4

Պայմանավորվող կողմերը կնպաստեն տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության խորացմանը: Նման համագործակցության ուղղությունները, բացի փոխշահավետ առևտրից, կպարունակեն և ուղղակի կապերի հաստատումն ու ընդլայնումը, և կոոպերացումը արտադրության մեջ, խառը ձեռնարկությունների, համատեղ միավորումների և կազմակերպությունների ստեղծումը, Սուբյեկտների ներկայացուցչությունների և մասնաճյուղերի բացումը, ինչպես նաև համաշխարհային պրակտիկայում կիրառվող համագործակցության և փոխանակության այլ ժամանակակից ձևերի զարգացումը և ներդրումը:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերը, համաձայն իրենց օրենսդրության, կստեղծեն անհրաժեշտ պայմաններ ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման և իրացման համար:

Առևտրատնտեսական կապերի իրականացման համար Պայմանավորվող կողմերը կարող են համաձայնեցնել սահմանափակող բնույթ չկրող փոխմատակարարվող ապրանքների և մատուցվող ծառայությունների տարեկան ինդիկատիվ ցուցակները:

Այդ ցուցակների հիման վրա մատակարարվող ապրանքների և մատուցվող ծառայությունների անվանացանկը և ծավալները կձևակերպվեն արձանագրությամբ:

Հոդված 6

Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի լիազորված բանկերը փոխադարձ համաձայնությամբ կսահմանեն սույն Համաձայնագրից բխող արտաքին տնտեսական գործառնությունների բանկային ապահովման տեխնիկական կարգը:

Հոդված 7

Բոլոր կարգի գործառնությունների և ծառայությունների հաշվարկները և վճարումները իրականացվելու են ազատ փոխարկվող արժույթով, համապատասխան Հայաստանի Հանրապետությունում և Ռումինիայում գործող օրենսդրությունների, ինչպես նաև միջազգային բանկային պրակտիկայում ընդունված ցանկացած ձևի:

Հոդված 8

Պայմանավորվող կողմերը իրենց տարածքներում կնպաստեն հայկական և, համապատասխանաբար, ռումինական Սուբյեկտների ապրանքների տարանցմանը երրորդ երկրներ կամ երրորդ երկրներից:

Հոդված 9

Սույն Համաձայնագրին համապատասխան մատակարարվող ապրանքները կարող են վերարտահանվել երրորդ երկրներ միայն արտահանողի գրավոր համաձայնությամբ:

Հայկական և ռումինական Սուբյեկտների կողմից համատեղ գիտատեխնիկական մշակումների արդյունքները կարող են փոխանցվել երրորդ անձանց և հրատարակվել միայն հայկական և, համապատասխանաբար, ռումինական գործընկերների գրավոր համաձայնությամբ:

Հոդված 10

Պայմանավորվող կողմերը Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի ներկայացուցիչների մասնակցությամբ կստեղծեն Խառը հանձնաժողով սույն Համաձայնագրի կատարման ընթացքի դիտարկման և առևտրատնտեսական ու գիտատեխնիկական համագործակցության ընդլայնման և զարգացման նպատակով առաջարկությունների մշակման համար:

Խառը հանձնաժողովի նիստերը կկայանան հաջորդաբար Հայաստանի Հանրապետությունում և Ռումինիայում՝ առնվազն տարին մեկ անգամ:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել և/կամ լրացվել Պայմանավորվող կողմերի նախնական գրավոր համաձայնությամբ:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրը կնքվում է անսահմանափակ ժամանակով և ուժի մեջ է մտնում Պայմանավորվող կողմերի փոխադարձաբար ծանուցումից հետո՝ առ այն, որ կատարվել են դրա՝ ուժի մեջ մտնելու համար բոլոր օրինական պահանջները:

Սույն Համաձայնագիրը կարող է լուծվել Պայմանավորվող կողմերից մեկի՝ Պայմանավորվող մյուս կողմին ծանուցելու միջոցով: Ըստ որում սույն Համաձայնագիրը կորցնում է իր ուժը լուծման մասին ծանուցումից 6 ամիս հետո:

Կատարված է Բուխարեստ քաղաքում 1991 թվականի հոկտեմբերի 4-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ռումիներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Տեքստի մեկնաբանման տարաձայնությունների դեպքում հիմք կընդունվի ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1992 թվականի նոյեմբերի 26-ից: